ԱՆԹԵՎ ԱՂԱՎՆԻՆ

Աստղային երկինքը է պարզ և հասարակ,
Մթության մեջ՝ հավատի գրկում,
Ընկնող աստղեր, մտքեր այնքան շատ
Ծիծաղի ծայներ՝ հանգիստ չտրվող:
Մի տխուր երգ է իմ ականջներում
Նայում եմ անթարթ փայլուն մի աստղի,
Ու փակում եմ թաց աչքերս կարմրած,
Թող տանի միտքս դեպի առ Աստված:
Ու չտեսնեմ ես , ո՛չ ցավ, ու ո՛չ վիշտ,
Թող կուրանամ այսուհետ ես ընդմիշտ,
Չտեսնեմ ես էլ երկիրն ավերված՝
Մի թիզ հող ունենք, անունը՝ Արցախ,
Մի բռունցք դարձած հայոց ազգ ունենք,
Ունենք առաջնորդ՝ Մոնթե ու Նժդեհ.
Եվ ունենք մենք ոգի՝ հային բնորոշ,
Վարդանի արյունն է մեր երակներում,
Հիսուսի աջն է դրված մեր գլխին,
Այդ մեզնից պիտի վախի թշնամին:
Ու այդպես էլ կա ու չի էլ փոխվի,
Որ մի հարյուր հայ ընդդեմ հազարի,
Ու այդպես էլ կա ու չի էլ փոխվի:
Որոշված է մեր ապագան վաղուց՝
Չի ուզում հավատալ թշնամին դրան,
Չի ուզում տեսնել հզոր Հայաստան,
Արյուն է կաթում մեր բորբ սրտերից:
Բայց մենք ապրում ենք, մենք ապրում ենք դեռ,
Գոյատևել ենք ու կգոյատևենք,
Թող այնպես լինի, որ երկիր չկորցնենք,
Կթոթափենք ցավը ու վեր կսլանանք:
Հայի ճակատագիրն է այդպես ...
Ու ընդմիշտ կապրենք՝ հաղթելով ցավին:

Արայիկ ՀԱՅՐԻՅԱՆ
Ֆինանսներ 1-ին կուրս

ԿԱՆ ՀԵՏՔԵՐ, ՈՐՈՆՔ ԵՐԲԵՔ ՉԵՆ ՋՆՋՎԻ

Արարատին նայող ամեն մի օտարերկրացու հայը պետք է պատասխանի. «Տապա՞նն ես փնտրում: Բայց չէ որ դա մենք ենք, որ չնայած հալածանքներին ու փորձություններին, դեռևս լողում ենք...». Ալերամո Հերմետ

Այո, մենք մեր տապանում ենք: Մենք պարտավոր ենք աշխարհին ներկայանալ ոչ միայն մեր հնամենի պատմությամբ, այլև ազգի ճակատագրի հանդեպ թախծոտ ծանրություն ուսած մեր եղեռնազարկ անցյալով և քաղաքակիրթ ներկայով, որին պահ տվեցիք մեր պապենական երկրի և բազմաչարչար ժողովրդի գալիքի հունդերը: Այսօր էլ աշխարհի աչքը փակ ու ականջը խուլ է մնում մեր բազմապատկվող ցավի դիմաց: Եվ համր ձևանալով շարունակում թշնամու չարակամ ծրագրերի հետ մեկտեղ լուռ քայլել մեր կողքով: Ասում են ազգերն ու ժողովուրդները գոյատևում են իրենց յուրօրինակ ինքնությամբ ու ինքնատիպությամբ: Բայց կան հետքեր, որ երբեք չեն ջնջվի: Արյունոտ եղեռն: Երբ թուրք փաշաների յաթաղանը փայլատակեց անմեղ ժողովրդի գլխին: Մազապուրծ փախած հայը գտավ գոյատևելու բանաձևն ու կրկին ընձյուղվեց, սածիլվեց, արմատավորվեց, բերքավորվեց: Նրա խոսուն գենի վրա դրոշմվեցին հինավուրց պատմության անջնջելի հետքերը: Չդատապարտված ոճիրը դարձավ մշտական վտանգ՝ սերունդների համար: Անմոռուկի աչքերով աշխարհը դիտարկող եղեռնազարկ սերունդը առ այսօր էլ թարմ է պահում անցյալից ժառանգած ցավն ու ոճիրը, և թմբկահարելով քարացած սրտով մարդու ականջները՝ կրկնում.

«Հիշում ենք և պահանջում ...»

Սվետլանա ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՏՄՄ 1-ին կուրս

«Քո ժամանակը»

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Խմբագիր՝ Զ.ՍԱՌԱՋՅԱՆ
Համարի պատասխանատու՝ Անժելա Շահանց, լրագրություն 3-րդ կուրս

Տպաքանակ՝ 400
Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում
Մեր հասցեն՝ Մ.Գոշի 5:
Հեռ. (047) 94 04 91

Ուզո՞ւմ ես գուշակել, տեսնել մի ժողովրդի ապագան՝ նայի՛ր նրա երիտասարդությանը:
ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ

Քո ժամանակը

№ 2
ՄԱՐՏ
2023

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ԱՐՊՀ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԼԻԱԳՈՒՄԱՐ ՆԻՍՏ

Մարտի 7-ին տեղի է ունեցել ԱրՊՀ ուսանողական խորհրդի լիագումար նիստ, որին ներկա էր նաև ԱրՊՀ ՈՒՇՀՀՏԱԳ պրոռեկտոր Վ. Յարամիշյանը: Նիստի օրակարգում բնագիտական, բանասիրական, տնտեսագիտական, պատմության և իրավագիտության ֆակուլտետների առաջադրած ուսանողներին ԱրՊՀ խորհրդի անդամ ընտրելու հարցն էր:

ԱրՊՀ խորհրդի 28 անդամներից 7-ը ուսանողներ են, ովքեր ընտրվում են ուսանողական խորհրդի լիագումար նիստում:

Ֆակուլտետների ուսանողական խորհուրդների կողմից առաջադրված թեկնածուներն էին բնագիտական ֆակուլտետի «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» 3-րդ կուրսի ուսանողուհի Անգելինա Հովհաննեսի Աղաբաբյանը,

բանասիրական ֆակուլտետի «Անգլերեն լեզու և գրականություն» 4-րդ կուրսի ուսանողուհի Աննա Կարենի Մինասյանը,

տնտեսագիտության ֆակուլտետի «Ֆինանսներ» 3-րդ կուրսի ուսանողուհի Մարիամ Արագածի Վահանյանը,

պատմության և իրավագիտության ֆակուլտետի «Իրավագիտություն» 2-րդ կուրսի ուսանողուհի Անի Հրայրի Աբրահամյանը:

Փակ քվեարկության արդյունքում կողմ ձայների գերակայությամբ բոլոր առաջադրված թեկնածուները ընտրվել են ԱրՊՀ խորհրդի անդամ և ներկայացվել լիագոր մարմնի հաստատմանը:

Իր շնորհավորական խոսքում պրոռեկտոր Վ. Յարամիշյանը ուժ և եռանդ է մաղթել, ընդգծել ու կարևորել նորընտիր կազմի պատրաստակամությունը ուսանողների շրջանում առաջացած խնդիրների, բողոքների, առաջարկների բարձրաձայնման հարցում, հայտնել իր և համալսարանի գոհունակությունը ՈՒԽ գործունեության նկատմամբ:

ԲՈՒՀ-ԴՊՐՈՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Մարտի 2-ին բուհ-դպրոց համագործակցության շրջանակներում ՈՒԽ, ՈՒԳԸ ու պատմության և իրավագիտության ֆակուլտետի ՈՒԳԸ հետ համատեղ կազմակերպվել է այցելություն Վ. Ջհանգիրյանի անվան հ. 11 ավագ դպրոց:

Պատմության և իրավագիտության ֆակուլտետի ուսանողները ներակայացրել են դասախոսություն՝ 1988 թ. փետրվարի 27-29-ը ընկած ժամանակահատվածում Խորհրդային Ադրբեջանի կողմից Սումգայիթ քաղաքում իրականացրած ջարդերի, Բաքվի կոտորածների, Ադրբեջանի կողմից վարվող քաղաքականության և հայատյացության դրսևորումների, ինչպես նաև էթնիկ զտումների վերաբերյալ:

«Շատ ենք կարևորում նման միջոցառումների իրականացումը դպրոցներում և հուսով ենք նմանօրինակ հանդիպումները շարունակական բնույթ են կրելու, որոնց շնորհիվ բուհ-դպրոց կապը առավել կամրապնդվի»,-նշել է ուսանողուհի Լուսինե Հարությունյանը:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱՆ

ԱրՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողական խորհուրդը կազմակերպել է միջոցառում՝ նվիրված կանանց միջազգային օրվան: Միջոցառմանը ուսանողները հանդես են եկել աստունքով, երաժշտական, պարային կատարումներով: Ֆակուլտետի դեկան Ռուզաննա Մանգասարյանը և ամբիոնների վարիչները շնորհակալություն են հայտնել ուսանողներին՝ կարևորելով մշակութային միջոցառումների դերն ու նշանակությունն ուսումնական գործընթացում:

ՓՈՐՁՈՒՍՈՒՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԴՊՐՈՑՈՒՄ

Արցախի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողները փորձուսուցման շրջանակում միջոցառում են կազմակերպել Ստեփանակերտի Խաչատուր Աբովյանի անվան համար մեկ դպրոցում: Գրական-գեղարվեստական միջոցառման ընթացքում աշակերտները հանդես են եկել աստունքով, երգ ու պարով:

Միջոցառումը նախաձեռնել են ուսանողուհիներ Հասմիկ Ավանեսյանը և Սյուզաննա Սահակյանը: Նրանց խոսքով՝ առիթը գարնանամուտն էր:

«Աշխարհի բոլոր գարունները գեղեցիկ են և ունեն իրենց պատգամը՝ արարելու, վերապրելու պատգամ: Բնությունը սեր է և գորովանք, այն սեր է սփռում ամենուր: Մեր այս փոքրիկ միջոցառումը ներկայացնելով որպես ամփոփիչ խոսք՝ մաղթում ենք, որ մեր գողտրիկ հայրենիքում գարնանաբույր օրեր լինեն»,-նշել է Հասմիկը:

Միջոցառմանը ներկա էին նաև փորձուսուցման ղեկավարներ Վեհանուշ Սարգսյանը, Օֆելյա Աբրահամյանը, դպրոցի ուսուցիչներ, աշակերտներ, ուսանողներ:

Ուսուցչուհի Ալինա Բաղդասարյանը շնորհակալություն է հայտնել ուսանողներին միջոցառում կազմակերպելու և հաճելի տրամադրություն պարգևելու համար՝ հույս հայտնելով, որ ապագայում ուսանողները կաշխատեն դպրոցում՝ որպես ուսուցիչներ:

Ուսանողներն էլ իրենց հերթին գոհունակություն են հայտնել դպրոցի ուսուցիչներից՝ փորձուսուցումն արդյունավետ անցկացնելու համար:

* * *

Բազմել լեռներին անխոնջ ու արթուն
Պահում ես դու մեզ քո գրկում թաքուն:
Սարի պես կանգուն, հավետ անկոտրում
Եղել ես դու միշտ զորեղ, աննկուն:
Հպարտությունն է ծորում մեր հոգուց,
Չենք վախենա մենք անգութ թշնամուց:
Անաչառ մտքով կգնանք դեպ վեր,
Թեպետ և լինենք մահվանն առընթեր:
Չենք հանձնվի գեհենի բոցին,
Առաքուր կանենք անսանձ ոսոխին:
Հնաբուր՛ Արցախ, բնության շնչով,
Գույնզգույն ծաղկի բույրով հոգեթով,
Նոր փայլ ես բերում աչքերիս կարծես,
Հզորանում եմ օր օրի քեզ պես:
Արցա՛խ իմ, չքնաղ, զմրուխտ օթևան
Իմ սիրտն եմ տալիս քեզ որպես նշան,
Որ քեզ չեմ լքի ինչ էլ որ լինի
Թեկուզ պայմանները լինեն զազրելի:
Թշնամին քեզ դեռ շատ կչարչարի
Միայն թե լինես տոկուն ու արի:
Արցա՛խ իմ, չքնաղ հանգրվան փոքրիկ
Քո գրկում կապրեմ ես միշտ երջանիկ:

Ֆինանսներ 1-ին կուրս
Միլենա ՂԱԶԱՐՅԱՆ